Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ, 21.08. 2015
http://www.asparez.am/news-hy/hay_ev_otarerkrya_gitnakanner_mek_harkitak-hy/

Հայ եւ օտարերկրյա գիտնականները կհանդիպեն մեկ հարկի տակ

Գիտական արդյունքների առեւտրայնացման հիմնախնդիրները

Սեպտեմբերի 25-27-ը Ծաղկաձորում մեկ հարկի տակ կհանդիպեն հայ եւ ԱՊՀ երկրների գիտնականները: Կազմակերպվում է «Գիտություն եւ ինովացիա 2015» միջազգային երիտասարդական գիտաժողովը: Նմանատիպ գիտաժողովները, ըստ Նորամուծության եւ ձեռներեցության ազգային կենտրոնի տնօրեն Գեւորգ Վարդանյանի, նպաստում են գիտական կապերի ամրապնդմանը, մտավոր գործունեության արդյունքների առեւտրայնացման ուղղությամբ համագործակցության հաստատմանը, ՀՀ եւ արտերկրի երիտասարդ գիտնականների միջեւ փորձի փոխանակմանը, նոր կապերի ստեղծմանը:

Գիտաժողովին մասնակցելու համար անհրաժեշտ հոդվածներն ու փաստաթղթերն ընդունվում են մինչեւ սեպտեմբերի 5-ը ներառյալ: Գեւորգ Վարդանյանն այսօր արդեն իսկ գիտաժողովին մասնակիցների ակտիվություն է նկատում:

-Գիտաժողովի շրջանակներում նախատեսվում են գիտության տարբեր բնագավառներում իրականացված հետազոտությունների արդյունքների ներկայացում, պլենար եւ բանավոր զեկույցներ, նաեւ քննարկումներ գիտական արդյունքների առեւտրայնացման հիմնախնդիրների եւ դրանց լուծման հնարավոր ուղիների եւ միջոցների շուրջ: Առհասարակ գիտական արդյունքի առեւտրայնացումը բավականին բարդ եւ երկարատեւ գործընթաց է. եթե գիտնականն ունի գիտական մշակում, նա պարտավոր չէ այդ գիտական մշակումը բերել առեւտրայնացման, որովհետեւ այն պահանջում է հատուկ մասնագիտացում,-ասում է Գ. Վարդանյանը:

Նորամուծության եւ ձեռներեցության ազգային կենտրոնի գործառույթներից է գիտական արդյունքների առեւտրայնացման գործընթացի կազմակերպումը: Գ.Վարդանյանը, օրինակ, բազմաթիվ պրոբլեմներ է տեսնում գյուտարարին ձեռներեցի հետ կապելու, ձեռներեցի հետ գիտական արդյունքը բիզնես դաշտ բերելու գործընթացում:

-Ինչպես ողջ աշխարհում, բավական շատ գյուտերի, գիտական մշակումների շատ քիչ տոկոսն է հնարավոր եղել բերել առեւտրայնացման աստիճանին, որն իրենից հետաքրքրություն է ներկայացնում բիզնեսի տեսանկյունից եւ արդեն որպես նորարարական պրոդուկտ՝ կիրառվել բիզնեսում: Լավ գաղափարներ կան, բայց այդ պրոցեսը բավական ժամանակատար է, որպեսզի կարողանանք մշակել եւ ստեղծել առեւտրայնացման ենթակա նախագիծ,-նշում է Նորամուծության եւ ձեռներեցության ազգային կենտրոնի տնօրենը:

«Գիտություն եւ ինովացիա 2015» միջազգային երիտասարդական գիտաժողովին մասնակցությունը հնարավոր է առկա եւ հեռակա տարբերակներով: Առկա մասնակցությունը իրականացվելու է մրցութային հիմունքներով՝ լավագույն հոդվածների հեղինակները կմասնակցեն գիտաժողովի աշխատանքներին եւ կներկայանան բանավոր զեկուցումներով: Նախատեսվում է նաեւ գիտաժողովի նյութերի ժողովածուի հրատարակում:

Այս գիտաժողովը կազմակերպում է Նորամուծությունների եւ ձեռներեցության ազգային կենտրոնը՝ ՀՀ նախագահի հովանու ներքո իրականացվող Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի, ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության, ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի, «Երիտասարդ գիտնականների եւ նորարարների ասոցիացիա» ՀԿ-ի եւ Երեւանում Ռուսաստանի գիտության, մշակույթի կենտրոնի աջակցությամբ:

«Գիտություն եւ ինովացիա 2015» միջազգային երիտասարդական գիտաժողովից հետո կազմակերպվելու է առաջին միջազգային երիտասարդական գիտական դպրոցը՝ «Նորարարությունների կառավարում» խորագրով: Գիտական դպրոցին մասնակցության համար արդեն ներկայացվել է 100 հայտ, մասնակիցների թիվը սահմանափակ է, ընտրվելու են լավագույնները:

Հեղինակ՝ Անի Մկրտչյան